



«ԵՄ Ն ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՀԱՄԱՐ.
ԿԱՆԱԶ ՀԱՄԱՅՆՔ՝ ԴԻՄԱԿԱՅՐԻՆ ԱՊԱԳԱ»

ԹԵՄԱ 7

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՅՈՒՄ



Դասընթացավար՝ **ԶԱՌԱ ԹԱՐԻՆԱԼՅԱՆ**

- Ինժեներ-անտառագետ, ՀԱԱՀ Անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոնի դասախոս
- Միջազգային և տեղական բազմաթիվ ծրագրերի փորձագետ՝ այդ թվում
 - Երևան քաղաքի կանաչ տնկարկների դենդրոֆլորայի տեսակային կազմի բարելավման և գեղազարդության բարձացման ասպեկտները
 - Հայաստանի անտառների ուղղաձիգ տարածման սահմանների կրճատման պատճառները և վերականգնման ուղիները
 - Տնտեսապես արժեքավոր և բարձր գեղազարդ ծառաբույսերի ներդրումը և հարմարվողականության ՀՀ-ում
 - Հայաստանի արիդային գոտու կանաչապատման մեջ օգտագործվող գեղազարդ ծառաբույսերի /աբորիգեն և ներմուծված/ օպտիմալ հարաբերակցության էկոլոգո-կենսաբանական ասպեկտները
- Մասնակցություն միջազգային գիտաժողովներին, այդ թվում
 - Բուսաբանության ակտուալ պրոբլեմները Հայաստանում, միջազգային գիտաժողով
 - Հողային պաշարների օգտագործման և կառավարման հիմնախնդիրները, միջազգային գիտաժողով
 - Հասարակության մասնակցությունը բնապահպանական խնդիրների լուծմանը միջազգային գիտաժողով
 - Բարձրակարգ պտղաբուծության սեմինար Հայաստանի համար՝ մասնագիտական վերապատրաստում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Մոդուլ 1 Բնապահպանական կրթությունն համայնքներում (ներկայիս իրավիճակ), ընդհանուր ակնարկ
- Մոդուլ 2 Չհամայնքներում բնապահպանական կրթության վերաբերյալ բնապահպանական մարտահրավերների ընկալում, գիտելիքներ և իրազեկում
- Մոդուլ 3 Չհամայնքներում առկա մարտահրավերները բացահայտելու և լուծելու մեթոդներ

Բնապահպանական կրթություն և իրազեկվածության բարձրացում – ըստ Կանաչ կառավարման մոդելի

- Ի՞նչ է բնապահպանական կրթությունը/Էկոկրթությունը. **Բնապահպանական կրթությունը «կանաչ» կառավարման բաղկացուցիչն է:** Այն մի գործընթաց է, որը թույլ է տալիս ուսումնասիրել բնապահպանական խնդիրները, ներգրավվել խնդիրների լուծմանը և քայլեր ձեռնարկել շրջակա միջավայրի բարելավման համար: Բնապահպանական կրթությունը նպաստում է մարդկանց բնապահպանական գիտակցության բարձրացմանը և վարքագծի փոփոխմանը, ինչը խթանում է «կանաչ» կառավարման մյուս բաղադրիչների արդյունավետ ներդրմանն ու կիրառմանը: Բնապահպանական կրթության բաղադրիչներն են.
- Բնապահպանական մարտահրավերների ընկալում, դրանց վերաբերյալ գիտելիք և իրազեկություն
- Շրջակա միջավայրի հանդեպ մտահոգություն, այն պահպանելու և բարելավելու մոտիվացիա
- Բնապահպանական մարտահրավերները բացահայտելու և լուծելու հմտություններ
- Մասնակցություն այն գործողություններին, որոնք հանգեցնում են բնապահպանական մարտահրավերների լուծմանը

Բնապահպանական կրթության հիմնական հասկացությունները

Բնապահպանական կրթությունը դա ուսուցման անընդհատ գործընթաց է, որն ուղղված է շրջակա միջավայրի վերաբերյալ գիտելիքների յուրացման և կանոնակարգման ոլորտներին, նոր հմտությունների և կարողությունների ձևավորմանը և էկոլոգիական մշակույթի ձևավորմանը: Բնապահպանական կրթության հիմնական նպատակն է շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորմանը:

Բնապահպանական կրթությունը իր հերթին բաժանվում է 2 հիմնական ուղղությունների`

- Էկոլոգիական կրթություն
- Էկոլոգիական դաստիարակություն

Բնապահպանական կրթության կառուցվածքի հիմնական սկզբունքները

- ❑ Անընդհատության սկզբունք
- ❑ Միասնականության սկզբունք /ճանաչողություն, վերապրում, գործողություն/
- ❑ Գլոբալ, ազգային և տեղական մակարդակների փոխկապակցության սկզբունք՝ բնապահպանական խնդիրների լուծման հարցերում
- ❑ Միջառարկայական կապերի սկզբունք

Բնապահպանական կրթության հիմնական բաղադրիչները

- **Ճանաչողական բաղադրիչ, որի նպատակն է ծանոթացնել հասարակության և բնության փոխգործակցության հիմնական գաղափարների և բնույթի վերաբերյալ, ներկայացնել գլոբալ էկոլոգիական խնդիրները և դրանց լուծման ուղիները**
- **Արժեքային բաղադրիչ, որի նպատակն է ներկայացնել շրջակա միջավայրի վերաբերյալ արժեքային բնութագրիչները և կարևորությունը անձի և հասարակության համար**
- **Նորմատիվային բաղադրիչ, որի նպատակն է ներկայացնել բնապահպանության իրավական և բարոյական նորմերի հիմքերը, բնօգտագործման առանձնահատկությունները, շրջակա միջավայրի հետ հաղորդակցվելիս՝ վարքի կանոնները**
- **Գործառնական բաղադրիչ, որի նպատակն է ճանաչողական և պրակտիկ հմտությունների ձևավորումը շրջակա միջավայրի պահպանության գործում՝ ներառելով հիմնական եղանակները և ձևերը**

Էկոլոգիական դաստիարակության հիմնական խնդիրները

- ✓ Մարդու կողմից բնության արժեքի ճիշտ ընկալումը
- ✓ Մարդու ինքնաճանաչումը՝ որպես բնության մասնիկ
- ✓ Գիտակից և հարգալից վերաբերմունքը բնության բոլոր օբյեկտների նկատմամբ
- ✓ Բնության փոխադարձ կապերի և փոխազդեցության ճանաչումը
- ✓ Ակտիվ դիրքորոշման դաստիարակությունը
- ✓ Էկոլոգիական անվտանգության համակարգերի ուսուցումը
- ✓ Շրջակա միջավայրի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումը
- ✓ Շրջակա միջավայրի անկրկնելիության և գեղեցկության ճանաչումը

OPTIMIZE

Եկոլոգիական դաստիարակություն նախադպրոցական ուսումնական հաստատություններում

Հիմնական մեթոդները և ձևերը

- Բնապահպանական էքսկուրսիաներ, դիտարկումներ
- Բնապահպանական դասեր
- Բնապահպանական խմբակներ
- Բնապահպանական մրցույթներ
- Բնապահպանական ակցիաներ
- Բնապահպանական տոների կազմակերպում
- Բնապահպանական խաղեր

Էկոլոգիական դաստիարակություն նախադպրոցական ուսումնական հաստատություններում

Բնապահպանական էքսկուրսիաներ, դիտարկումներ

Էքսկուրսիաները Էկոլոգիական դաստիարակության հատուկ ձևերից մեկն է, որոնք ունեն մեծ ճանաչողական նշանակություն:


Դրանց նպատակն է՝

- Շրջակա միջավայրի մասին կոնկրետ պատկերացումների ձևավորում
- Սենսորային զարգացում, որի հիման վրա առաջանում են մտածողության պրոցեսներ, զարգանում է երևակայությունը, ձևավորում է էսթետիկ զգացողություն

Մանկապարտեզի փոքր խմբերում էքսկուրսիաները իրականացվում են հենց մանկապարտեզի տարածքում, իսկ միջին և մեծ խմբերում՝ տարածքից դուրս:

Էկոլոգիական դաստիարակությունն նախադպրոցական ուսումնական հաստատություններում

Բնապահպանական էքսկուրսիաներ, դիտարկումներ



Եկոլոգիական դաստիարակություն նախադպրոցական ուսումնական հաստատություններում

Բնապահպանական դասեր



Եկոլոգիական դաստիարակությունն նախադպրոցական ուսումնական հաստատություններում

Բնապահպանական խմբակներ



Եկոլոգիական դաստիարակությունն նախադպրոցական ուսումնական հաստատություններում

Եկոլոգիական մրցույթներ



OPTIMIZE


Եկոլոգիական դաստիարակությունն նախադպրոցական ուսումնական հաստատություններում

Եկոլոգիական փառատոներ




Էկոլոգիական դաստիարակություն նախադպրոցական ուսումնական հաստատություններում

Հիմնական բաղադրիչները



Էկոլոգիական դաստիարակությունն ախտադարձիցական ուսումնական հաստատություններում


Բնապահպանական զարգացման նպատակները



OPTIMIZE

Եկոլոգիական դաստիարակությունն նախադպրոցական ուսումնական հաստատություններում

Եկոլոգիական կրթության նպատակները



Դպրոցականների Էկոլոգիական կրթության մոդելները

1. Բազմաառարկայական, որի դեպքում բնապահպանական տարբեր ոլորտների գիտելիքներ ներառվում են հիմնական առարկաների ուսումնական նյութերի մեջ և առանձին չեն դասավանդվում:
2. Մեկ առարկայական, երբ դպրոցի տարբեր դասարանների համար մշակվում են հատուկ դասագրքեր, որոնք ներառում են բնապահպանական ոլորտի գիտելիքների անհրաժեշտ ծավալը:
3. Խառը մոդել, որի դեպքում բնապահպանական ոլորտի գիտելիքները ներառվում են ինչպես այլ առարկաների ուսումնական նյութերի մեջ, այնպես էլ կան հատուկ մշակված դասագրքեր տարբեր դասարանների աշակերտների համար: Այս մոդելը համարվում է ամենահեռանկարայինը, քանի որ թույլ է տալիս ստանալ ինչպես նեղ մասնագիտական տեղեկատվություն, այնպես էլ հնարավորություն է ընձեռնում տեսնել միջառարկայական կապերը և բնապահպանական գիտելիքների կիրառությունը տարբեր ոլորտներում:

Էկոլոգիական կրթության հիմնական կոմպետենցիաները կայուն զարգացման համատեքստում

1. **Համամշակութային, որը կայանում է շրջակա աշխարհը և բնությունը գնահատելու մեջ, պատմամշակութային արժեքների նկատմամբ հարգալից վերաբերմունքի մեջ:**
2. **Ուսումնաճանաչողական, որը կայանում է աշակերտների կրթական ցենզի բարձրացման, ինքնուրույն ճանաչողական գործունեության իրականացման, վերլուծության, պլանավորման, ադեկվատ ինքնագնահատականի ձևավորման մեջ:**
3. **Ինֆորմացիոն, որի մեջ մտնում է ինֆորմացիայի տարբեր աղբյուրների հետ աշխատելու մեջ, գիտելիքների համակարգման, ձևակերպման, ընդհանրացման, պահպանման և փոխանցման մեջ:**
4. **Սոցիալ-քաղաքացիական, որը ներառում է բնապահպանական ոլորտի գործնական հմտություններ, էկոլոգիական խնդիրների ուսումնասիրության մեթոդների տիրապետում, որոշումներ կայացնելու ունակություն, սեփական գործունեության համար պատասխանատվության ստանձնում:**


Էկոլոգիական կրթության հիմնական կոմպետենցիաները կայուն զարգացման համատեքստում

- Կոմունիկատիվ, որը ներառում է դիմացինի կարծիքը հաշվի առնելու և լսելու ունակությունը, ճիշտ ներկայացնելու սեփական կարծիքը, թիմային աշխատանքի հմտություններ ձևավորելը:
- Անձնային աճի և զարգացման, որը ներառում է անձնային հատկությունների բարելավում, հոգեբանական կրթվածության մակարդակի զարգացում, ինքնազարգացման ֆիզիկական, մտավոր և հոգեկան եղանակների ձևավորում, առողջ ապրելապեյրպի սերմանում:
- Էկոլոգիական, որը ներառում է աշակերտների կողմից Էկոլոգիական գիտելիքների և հմտությունների օգտագործում ինչպես անձնական, այնպես էլ հասարակական մակարդակներում:

Բնապահպանական կրթության համակարգայնության և անընդհատության ապահովումը



Բնապահպանական կրթությունը ԲՈՒՅ-ում



OPTIMIZE

Բուհական կրթական միջավայրի բնապահպանական կրթության բազային բաղադրիչները



**Տարածա-առարկայական
/ֆիզիկական շրջապատ/**



**Սոցիալական /մարդկային
գործոններ/**



**Կազմակերպչա-տեխնոլոգիական
/ուսուցման ծրագիր/**

Բուհական բնապահպանական կրթության հիմնական սկզբունքները

- Բնապահպանական դաստիարակության բնահեն, մշակութահեն և ինքնաբուխ լինելը
- Բնապահպանության մշակույթի ճանաչողական, զգայական և գործառնական բաղադրիչների միասնությունը
- Բազմակարծության և բազմազանության սկզբունք
- Միջառարկայական կապերի ապահովման, ֆունդամենտալ բնագիտական և հումանիտար գիտելիքների համախմբում
- Համակարգայնության սկզբունք, շրջակա միջավայրի նկատմամբ համակարգային մոտեցումների դրսևորում
- Տարբեր մակարդակների փոխկապակցման սկզբունք, գլոբալ, լակալ, անձնական մակարդակներ
- Գուշակելիության սկզբունք, տարբեր սցենարների ներկայացում

Շրջակա միջավայրի բնապահպանական խնդիրների վերաբերյալ գիտելիքների համակարգումը բուհական կրթության շրջանակում



1 ՓՈՒԼ

Մարդու և շրջակա միջավայրի անմիջական շփման դիտարկում /կենսական տարածության ձևավորում/

2 ՓՈՒԼ

Փոփոխությունների երկար շղթաների ուսումնասիրություն, մարդու գործունեության ազդեցության գնահատում, կապը առողջության և տնտեսական գործունեության հետ

3 ՓՈՒԼ

Մարդկանց լուրջ գործողությունների գնահատում և կապը գլոբալ հետևանքների հետ

OPTIMIZE

Համայնքներում բնապահպանական կրթության ներկայիս վիճակը

Համայնքներում բնապահպանական կրթության իրավական հիմքերը

Բնապահպանական կրթությունը կանոնակարգվում է ազգաբնակչության Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին ՀՀ օրենքով, որը սահմանում է պետական քաղաքականության սկզբունքները Էկոլոգիական անընդմեջ կրթության ոլորտում: Էկոլոգիական անընդմեջ կրթության պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

- քաղաքացու Էկոլոգիական գիտելիքների անհրաժեշտ նվազագույնը ստանալու պետական երաշխիքի ապահովումը
- Էկոլոգիական կրթության պարտադիր լինելը կրթական համակարգի բոլոր մակարդակներում, դրա շարունակականությունը և համալիր բնույթը
- Էկոլոգիական կրթության հարցերի ընդգրկումը Էկոլոգիական նպատակային և ճյուղային բոլոր պետական ծրագրերում
- Էկոլոգիական կրթության ուղղվածությունը շրջակա բնական միջավայրի պահպանության խնդիրների լուծման ընթացքում
- պետական քաղաքականություն

Էկոլոգիական անընդմեջ կրթության համակարգի կառուցվածքը

Էկոլոգիական անընդմեջ կրթությունը ներառում է հետևյալ մակարդակները.

- նախադպրոցական Էկոլոգիական կրթություն և դաստիարակություն (Էկոլոգիական կրթությունն ընտանիքում և նախադպրոցական հաստատություններում).
- միջնակարգ Էկոլոգիական կրթություն.
- միջին մասնագիտական Էկոլոգիական կրթություն.
- բարձրագույն մասնագիտական Էկոլոգիական կրթություն.
- հետբուհական Էկոլոգիական կրթություն.
- հասարակության լայն խավերի Էկոլոգիական կրթություն և դաստիարակություն, այդ թվում՝ զինված ուժերում:


Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն Էկոլոգիական անընդմեջ կրթության բնագավառում կարգավորվում են «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում նախադպրոցական բնապահպանական կրթության առկա խնդիրները




ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում նախադարոցական բնապահպանական կրթության հիմնախնդիրների լուծման ուղիները



ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում դպրոցական բնապահպանական կրթության առկա խնդիրները




ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում դպրոցական բնապահպանական կրթության հիմնախնդիրների լուծման ուղիները




OPTIMIZE

ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում բուհական բնապահպանական կրթության առկա խնդիրները




ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում բուհական բնապահպանական կրթության հիմնախնդիրների լուծման ուղիները





Համայնքներում առկա բնապահպանական մարտահրավերները բացահայտելու և լուծելու հիմնական մեթոդները



OPTIMIZE



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



OPTIMIZE